ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆՑ (1867—1952)

Սաստ տարի առաջ, 1952 թվականի հունիսի 21-ին, 85 տարեկան հասակում, Անթիլիասում իր աշխարհն էր փակում Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանցը:

Ազգիս Վեհափառ Հայրապետը, իր 12 մարտ թվակիր սրբատառ կոնդակով, հրահանգում էր նրա մահվան տասներորդ տարելիցի առթիվ, հուլիսի 10-ին, Հոգեգալստյան օրը, սուրբ պատարագի մատուցմամբ և հանդիսություններով, ոգեկոչել հիշատակը մեծ Հայրապետի, որը «ՄԵԾ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՄԸՆ ԷՐ ԻԲՐԵՎ ՀԱՎԱՏԱՎՈՐ ՈՒ ՆԵՐՇՆՉՎԱԾ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ, ՈՐ ԻՐ ՇՈՒՐՋԻՆՆԵՐՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՄԵՐԱՋՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԲՈՒՌ-ԲՈՒՌ ԲԱՇԽԵՑ Ս. ԱՎԵՏԱՐԱՆԻ ԼՈՒՅՍԸ՝ ՀՈՒՐ ԽՈՍՔԵՐՈՎ, ՀՈՒՐ ԱՎՅՈՒՆՈՎ»,—գրում է Վեհափառը:

Երանաշնորհ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը մեծ էր և միածույլ ամբողջություն՝ որպես ՄԱՐԴ, ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ և ՀԱՅՐԵՆԱՍԵՐ:

Արդարև, Գարեգին Վեհր վերջին հիսնամյակի մեր վաստակավոր ու հեղինակավոր եկեղեցականներից մեկն էր որպես հերետուն գիտնական, բազմահմուտ պատմագիր, հոգեշունչ բեմբասաց, հայրենասեր հոգևորական, հայ մշակույթի վաստակավոր գործիչ, անձնդիր հովիվ ու առաջնորդ:

Շնորհազարդ Հայրապետը իր բովանդակ գիտակցական կյանքը. գիտությունն ու շնորհները առանց մնացորդի նվիրել է իր եկեղեցուն, իր ժողովրդին, իր Հայրենիքին:

«ԻՐ ԱՄԲՈՂՋ ԿՅԱՆՔԸ ԱՆ ՆՎԻՐԵՑ,— գրում է Վեհափառ Հայրապետը իր կոնդակում,— ԻՐ ԵԿԵՂԵՑԻԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ, ՀԱՅ ԱԶԳԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՇԱՀԵՐՈՒ ԲՅՈՒՐԵՂՅԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՄԲ: ԱՎԵԼԻ ՔԱՆ ԿԵՍ ԴԱՐ ՇԱՐՈՒՆԱԿ ԱՅՍ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՏՔՆԵՑԱՎ ՈՒ ՊԱՅՔԱՐԵՑԱՎ, ԻՐ ԱՐԴԱՐ ՀՈԳԻՈՎ ԿՈՒՐԾՔ ՏԱԼՈՎ ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐՈՒՆ ԵՎ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐՈՒՆ»:

Հանգուցյալը ծնվել է 1867 թվականին, հայ գյուղացու աղքատ, բայց կրոնական և ազգային ավանդություններով հարուստ ընտանիքում: «Ես աղքատ հասարակ գյուղացու զավակ եմ,— գրել է հանգուցյալը,— բայց երբ այսօր եմ՝ ինչպես եմ, պարտական եմ միայն իմ Ազգին, իմ ժողովրդին, իմ եկեղեցուն, Ս. Էջմիածնին: Ես կարող էի նախիր պաճող կամ տավարած լինել. այսօր Հովվապետ եմ՝ պարտական լինելով իմ եկեղեցուն և հոտին»:

Համեստ, բարեպաշտ գյուղացու վիճակից մինչև Հայ եկեղեցու նվիրապետության բար-

ձրագույն Աթոռներից մեկը, Նա բարձրացել է շնորհիվ Իր անընկնելի հավատին, շնորհիվ Իր անձնական և քաղաքական հազվագյուտ այն շնորհների, որոնց խոր արմատները գտնվում են Նրան ծնունդ տվող ժողովրդի հոգում:

Երանաշնորհ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը կյանքի փառավոր ուղի է անցել: Նրա կյանքի բոլոր երեսները ու գործունեության բոլոր հանգրվանները եղել են բեղմնավոր և արդյունքներով լի: Մեծ է Նրա ավանդը հայ արվեստի, պատմության, մշակույթի ուսումնասիրության գործում: Մեծ է Նրա ավանդը Հայ Եկեղեցու կազմակերպման և բարգավաճման բնագավառում: Նրա կյանքն ու բեղմնավոր գործունեությունը ներշնչող օրինակ կարող են հանդիսանալ բոլոր նրանց, որոնք ուխտել են Հայ Եկեղեցու սուրբ սեղանների առաջ՝ ծառայել բոլորանվեր կերպով մեր ժողովրդին և Մայր Հայրենիքին:

«ՄԵԾ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԻՇԱՏԱԿԸ,— գրում է Վեհափառ Հայրապետը,—ԱՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՈՒ ԳՈՐԾԻ ՈՒՂԻՆ, ԵԿԵՂԵՑԱՇԵՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԱՆՎԵՐ ՓԱՌԱՎՈՐ ՕՐԻՆԱԿ ՄԸ ԿՀԱՆԴԻՍԱՆԱՆ ԲՈԼՈՐ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ԿՈՒԶԵՆ ՀԱՎԱՏԱՐԻՄ ՄՆԱԼ ԻՐԵՆՑ ՈՒԽՏԻՆ ԵՎ ԻՐԵՆՑ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ»:

Սարկավագությունից ընդհուպ մինչև Մեծի Տանն Կիլիկիո Հայրապետական Գահը, հանգուցյալը մատուցել է անձնվեր, շնորհակալ ծառայություններ: Նրա գործունեությունը չափազանց ընդարձակ հորիզոններ է ընդգրկում: Ո՛ւր և ե՛րբ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը Նրա կարիքն է զգացել, ո՛ւր և ե՛րբ հայ ժողովրդի ցավն ու դառն վիճակը կանչել են Նրան, Նա վազել է այդ ՁԱՅՆԻ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ետևից՝ անվարան, արի ու վճռական, հավատարիմ Իր կոչման պարտականություններին:

1915 թվական: Մեծ եղեռնի տարին: Թշվառությունն ու համաճարակը աննկարագրելի ավերներ են գործում գաղթական հայ ժողովրդի ծոցում: Ամեն կողմ արյուն, արցունք, չկա դեղ ու դարման այդ ցավին: Անձնազոհ հոգևորականը, բարի Սամարացու նման, Իր վիրավոր ու սգավոր ժողովրդի մեջն է. Իր դժբախտ, չքված հոտի գլխին, մխիթարում է, սփոփում, և Իր ժողովրդի անլուր տառապանքի դիմաց՝ մղկտում, արտասվում: «Իբր եկեղեցական, ժողովրդի զավակ, ես ապրել ու զգացել եմ իմ ժողովրդի ցավն ու հուսահատությունը իր ամբողջ խորությամբ», - գրում է Նա:

1918 թվական: Հայրենիքի և հայ ժողովրդի գլխին նոր փոթորիկներ և փորձություններ են կուտակվում: Սարդարապատում արյունաքամ և մահից ազատված հայ ժողովուրդը օրհասական կռիվ է մղում: Ծանր օրեր են: Հովսեփյանցը Իր ժողովրդի հետ է, մեր օրերի այս նոր Ավարայրում որպես նոր Ղևոնդ երեց, որը պատգամում է Իր ժողովրդին՝ կա՛մ հաղթանակել, կա՛մ պատվով մեռնել ռազմի դաշտում:

«ՀԵՐՈՍԱՑԱՎ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՃԱԿԱՏԻ ՎՐԱ,— գրում է գեղեցկորեն Վեհափառ Հայրապետը,—ՈՒ ԱՊԱ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ ՆՈՒՅՆ ՄԱՐՏԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՑ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱԹՈՌԻՆ ՎՐԱ ԲԱԶՄԱԾ, ՆՈՒՅՆ ՈԳԵՇՆՉՈՒՄՈՎ. ՆՈՒՅՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՄԲ: ՄԵՐ ԴԱՐՈՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐՈՒՆ ՎՐԱ, ԻՐ ԱՆՈՒՆԸ ՈՍԿԻ ՏԱՌԵՐՈՎ ՔԱՆԴԱԿՎԱԾ ՊԻՏԻ ՄՆԱ, ԻԲՐԵՎ ԱԽՈՅԱՆ ԻՐԱՎ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ»:

1934 թվականին Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցը նշանակվում է Հայրապետական լիազոր նվիրակ: Պառակտվել էր հայ Սփյուռքը: Եղբայրը եղբոր դեմ սուր էր բարձրացնում: Նա եկավ Ս. Էջմիածնից որպես հաշտության աղավնի և համերաշխության ցող՝ Իր գիտությամբ, Իր հայրենասիրությամբ, Իր սիրով և հոգով մեղմելու բորբոքված կրքերը, ու հանդիսացավ ոսկե կամուրջ Հայրենիքի և Սփյուռքի միջև: Ու կարողացավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և վերածնված Մայր Հայրենիքի շուրջ համախմբել հայության բեկորները:

1938—1943 թվականներին Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանցը այս ոգով ղեկավարեց ԱՄՆ-ի հայոց թեմը: Նրա առաջնորդության տարիները հանդիսացան թեմի հոգևոր, մշակութային, ազգային-եկեղեցական գործունեության բեղուն օրերը:

Նրա գահակալությունը Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի վրա՝ նոր հորիզոններ բացավ վտարանդի այդ Աթոռի հոգևոր, մշակութա-

յին զարգացման ու տպագրության համար: Նա նոր փառքով և շուքով ծածկեց այդ Աթոռը, որը Նրա համար իշխանության Աթոռ և հեղինակության մական լինելուց ավելի հանդիսացավ ծանր և պատասխանատու ծառայության ասպարեզ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը Երանաշնորհ Տ. Գարեգին Կաթողիկոսի օրով իրար հետ շաղկապվեցին ավելի սերտ սիրով և եղբայրությամբ, որովհետև Գևորգյան Ճեմարանի սեղաններից սկսած. Ամենայն Հայոց Հայրապետ Գևորգ Զ Կաթողիկոս և Տանն Կիլիկիո Հայրապետ Գարեգին Վեհը կապվել էին մեծ բարեկամությամբ, ինչպես կարող են կապվել երկու մեծ հոգիներ, սիրել իրար այնպես, ինչպես Դավիթը սիրում էր Հովնաթանին:

Երկու Հայրապետների սրտի, մտքի, հոգու մեծ բարեկամությունը շարունակվեց և աճեց Նրանց հովվապետության տարիներին:

«ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԵՐԱԳԱՀ ԴԻՐՔԸ,— գրել է Գարեգին Վեհը,—ԿԿԱՄԵՆԱՅԻՆՔ ՈՐ ԸՍՏ ԱՄԵՆԱՅՆԻ ՊԱՀՊԱՆՎԵՐ ՆՐԱՆՑ ՊԱՏՇԱՃ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՊԱՇՏՈՆԻ ԵՎ ԿՈՉՄԱՆ...: ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԵՆՈՒՄ ԵՆՔ ԻՐԱԿԱՆԱՑԱԾ ՏԵՍՆԵԼ ԳԻՏԱԿՑԱԿԱՆ, ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԱՐԳԱՆՔՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԱՐՏՔԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ՁԳՏՈՒՄՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ...: ՄԵՆՔ, ԻԲՐԵՎ ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԻ ԳԱՀԱԿԱԼ, ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՄԵՐ ԿԱՐԵԼԻՆ ԲԵՐԵԼ, ՀԱՎԵՐԺԱՑՆԵԼՈՒ ԱՎԵԼԻ ՍԵՐՏ, ԱՎԵԼԻ ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՄԻԵՎՆՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՎԵԼԻ ՇՐՋԱՀԱՅԱՑ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀԵՏ»:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Տանն Կիլիկիո Կաթողիկոսության սիրալիր հարաբերությունները, նույն սկզբունքների լույսի տակ, Հայ Եկեղեցու և Ազգի գերագույն շահերի ըմբռնումով, շարունակվեցին մինչև Երանաշնորհ Հայրապետի մահը:

1952 թվականի հունիսին, երբ Իր հավատավոր աչքերը փակում էր հանգուցյալը հիվանդության մահճում, հառաչում էր լուսահոգին, մտահոգված, թե «ԻՆՉ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԻՄ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ԿԻԼԻԿԻՈ ԱԹՈՌԻ ՎԻՃԱԿԸ»:

Գարեգին Կաթողիկոսի մահից հետո Նրա աշակերտներից ոմանք չկարողացան դըժբախտաբար ընթանալ Նրա գծած միասնության և համերաշխության ճանապարհով, չկարողացան ապրեցնել Հովսեփյանցի ՄԵԾ ԳՈՐԾԸ, և Նրա ԱԹՈՌԸ դարձրին տխուր պայքարների կրկես:

Ծանոթ է բոլորիս Գարեգին Կաթողիկոսի մահից հետո Անթիլիասի շուրջ ստեղծված տագնապը:

«ԱՅՍՕՐ ԱԼ,—գրում է Վեհափառ Հայրապետը,—ԿՅԱՆՔԻ ՄՅՈՒՍ ԱՓԵՆ, ԱՆ ԿՇԱՐՈՒՆԱԿԵ ՄԵԶ ԼՈՒՍԱՎՈՐԵԼ, ԶՈՐԱՑՆԵԼ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԵԼ: ԿՇԱՐՈՒՆԱԿԵ ՆԱԵՎ ՀՈՐԴՈՐԵԼ ՈՒ ՍԱՍՏԵԼ ԲՈԼՈՐ ԱՆՈՆՔ, ՈՐՈՆՔ ԿՇԵՂԻՆ ԻՐ ԳԾԱԾ ՈՒՂԻԵՆ ՈՒ ԿԹԱՓԱՌԻՆ ԿՈՐՍՏՅԱՆ ՃԱՄԲԱՆԵՐՈՒ ՎՐԱ»:

Հանգուցյալ Հայրապետը ոչ միայն մեր ազգային-եկեղեցական միասնության առաքյալն էր, այլ նաև ջերմ, իրավ հայրենասեր: «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԵՆՏՐՈՆՆ Է ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ,—պատգամել է Նա:—ԿՅԱՆՔՈՒՄ ՇԱՏ ԵՐԱԶՆԵՐ ԵՄ ՈՒՆԵՑԵԼ, ՈՐՈՆՔ ԻՐԱԳՈՐԾՎԵԼ ԵՆ. ԵՐԱԶԵԼ ԵՄ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ, ԾԱՂԿՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ՈՐԸ ԻՐԱԿԱՆԱՑԵԼ Է ԻՄ ԵՐԱԶԻՑ ԷԼ ՇՔԵՂ...: ԻՄ ՀՈԳԻՆ ՎԿԱՅՈՒՄ Է, ԵՎ ԵՍ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ, ՈՐ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՍԿԻԶԲ ԵՎ ՈՍԿԵԴԱՐ Է ԱՐՎԵԼ: ԹՈՂ ԾԱՂԿԻ ՄԵՐ [illegible] ՀԱՅՐԵՆԻՔԸ ԴՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲՈԼՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ: ՄԵՐ ՀՈԳՈՒ ԱՉՔԵՐԸ ՈՒՂՂՎԱԾ ԵՆ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐԵԼՔԸ ԵՎ ՍՐՏԱՏՐՈՓ ԱԿՆԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԵՏԵՎՈՒՄ ԵՆՔ ՆՐԱ ԱՄԵՆ ՄԻ ՔԱՅԼԱՓՈԽԻՆ, ԴԵՊԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆՆ ՈՒ ԳԵՂԵՑԻԿԸ»:

Գևորգյան ճեմարանի սեղաններից, Գարեգին Հովսեփյանցը Իր ուշադրությունը բևեռել է մեր ժողովրդի հոգևոր, մշակութային անկորնչելի գանձերի վրա:

Ինչպիսի՜ մնայուն և անծանոթ գեղեցկություններ, անգին գոհարներ է հանել Նա ձեռագրերի էջերից, անցյալի փլատակներից, դարերի մշուշից և դրել մեր աչքերի առաջ:

Եթե Թորամանյանը հայ ճարտարապետության մեր հնագույն կոթողների գիտական ուսումնասիրությամբ հայտնագործել է հայ

ինքնուրույն նարտարապետությունը. անման Կոմիտաս վարդապետը՝ երևան է հանել հայ նարազատ երաժշտությունը. Գարեգին Վեճը նույնանգործել է հայ ինքնուրույն մանրանկարչությունն ու զարդարվեստը:

Հայ ձեռագրերի աշխարհը նրա կյանքի տարերքն է եղել: Բայց բազմահմուտ Հայրապետի կարծիքով, «ՄԵՐ ՊԱՏՄԻՉՆԵՐԸ ՔԻՉ ԲԱՆ ԵՆ ՏՎԵԼ. ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԳԵՂԵՑԻԿ է ՔԱՆ ԻՆՉ ՈՐ ՏՎԵԼ ԵՆ ՆՐԱՆՔ»:

Ու գտնելու համար անցյալի մշուշում թաղված այդ գեղեցիկ պատմությունը, նա քար առ քար մաք է հեկել պատմական Հայաստանի բոլոր վայրերը, շունչ ու կենդանություն է տվել ավերակներին, էջ առ էջ թերթել մագաղաթի բուրգերը, երևան բերել հայ ժողովրդի մշակութային մեծությունը:

Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը որպես պատմաբան, բանասեր և արվեստագետ, ունի զարմանալի ներհայեցողություն, գործի նկատմամբ ծայրահեղ բծախնդրություն, անսահման սեր ու գուրգուրանք:

Մագաղաթի յուրաքանչյուր կտորի, անցյալից եկած քարի յուրաքանչյուր բեկորի վրա, գիտնական Գարեգին Հովսեփյանցը հայ ժողովրդի ստեղծագործ հանճարի դրոշմն է գտել: «ԵՍ ԱՎԵՐԱԿՆԵՐԻ ՄԵՋ ԿՅԱՆՔ ԵՎ ԻՆՉԻ ԵՄ ԳՏՆՈՒՄ,— գրել է նա,— ԼԵՋՈՒ, ԵՐԳ, ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ ԵՄ ԳՏՆՈՒՄ: ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԷԼ ԱՎԵՐԱԿ է ԴԱՐՁԵԼ ԱՆՑՅԱԼՈՒՄ. ՄԵՆՔ ՆՄԱՆ ԵՆՔ ՄԵՐ ԵՐԿՐԻ ԱՎԵՐԱԿՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ՈՒՆԵՆ ՍԱԿԱՅՆ ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՀՈԳԻ ԵՎ ՇՈՒՆՉ, ԵՎ ՈՐՈՆՔ ՊԱՀՎԵԼ-ՊԱՀՊԱՆՎԵԼ ԵՆ ՈՒ ԿՅԱՆՔ ՏՎԵԼ ՄԵՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՅՈՒՍ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ»:

Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի բողած ժառանգությունը վեր է մի մարդու կարողությունից—տպագրված ավելի քան երեսուն մեծ ու փոքր հատորներ, հարյուրավոր հոդվածներ, ուսումնասիրություններ և նույնքան թվով անտիպ գրվածքներ:

Կարելի չէ խմբագրականի այս սեղմ առթերի մեջ ընդհանուր խոսքերով սպառել երանաշնորհ Գարեգին Հայրապետի մեծակշիռ գրական վաստակը և փայլուն գործունեությունը, որպես ՀԱՅ ՄԱՐԴՈՒ, ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԻ, ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆԻ և ՀԱՅՐԵՆԱՍԵՐԻ:

Արդար է Ազգիս Վեհափառ Հայրապետի խոսքը Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի ժառանգության մասին.

«ՈՒ ԲԱԶՄԱՌ է ԱՆ ՄԱՆԱՎԱՆԴ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԻՐ ԱԹՈՌԻՆ ՎՐԱ, ԱՌԱՎԵԼ ՓԱՌՔՈՎ ՔԱՆ ՈՐԵՎԷ ԱՅԼ ՏԵՂ»:

«ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆՑ ԿԵՆԴԱՆԻ է ՄԵՐ ԿՅԱՆՔԻՆ ՄԵՋ, ՄԵՐ ՀՈԳԻՆԵՐԵՆ ՆԵՐՍ, ԵՎ ԻՐ ԱՆՈՒՆԸ ՍՈՒՐԲ ԿՊԱՀՎԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԼՈՒՍՍԵՐՈՒՆ ՄԵՋ»:

«ԼՈՒՍԱԲՆԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԸ է՝ ԵՎ ՊԻՏԻ ՄՆԱ՝ ԲՈԼՈՐ ԳԱԼԻՔ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԲՈՑԱՇՈՒՆՉ ՊԱՏԳԱՄ ՄԸ ԵՎ ԼՈՒՍԵՂԵՆ ՃԱՆԱՊԱՐՀ ՄԸ»: